ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2015թ. թիվ 400-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի N 282 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 657-Ն որոշման 8-րդ կետի և ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2.1 կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.21 կետի «դ» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում 2000թ. ծնված պատանիների զինկոմիսարիատներին կցագրման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

1. 2016 թվականի հունվարից մինչև ապրիլի 29-ը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքային զինվորական կոմիսարիատներում անցկացնել 2000թ. ծնված պատանիների կցագրում: Նշված ժամկետներում տարբեր պատճառներով զինկոմիսարիատ չներկայացած պատանիների կցագրումն ավարտել 2016թ. դեկտեմբերի 30-ին:

2. 2000թ. ծնված պատանիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքային զինվորական կոմիսարիատներում ստեղծել զինապարտների կցագրման հանձնաժողովներ՝ համաձայն N 1-5 հավելվածների:

3. Առաջարկել.

1) Մարզի տարածաշրջանների զինվորական կոմիսարներին՝

ա. Կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություն՝ նրանց հետագա բուժումը կազմակերպելու նպատակով, ինչպես նաև Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

բ. Մինչև 2016թ. մայիսի 16-ը մարզպետին ներկայացնել 2000թ. ծնված պատանիների կցագրման մասին տեղեկանքներ:

2) ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

Անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել մարզի տարածաշրջաններում կցագրումից խուսափող պատանիներին հայտնաբերելու և համապատասխան զինկոմիսարիատ ներկայացնելու գործում:

3) ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության Լոռու մարզի անձնագրային բաժինների պետերին՝

2016թ. ընթացքում 16 տարին լրացող պատանիներին անձնագիր տալու, փոխանակելու, ըստ բնակության վայրի հաշվառելու կամ հաշվառումից դուրս գալու գործողությունները կատարել միայն նրանց զինվորական փաստաթղթերում համապատասխան զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում:

4. Հանձնարարել.

1) Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

ա. Ըստ զինվորական կոմիսարիատների հաստատած ժամանակացույցերի սահմանված ժակմետում զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին ապահովել համապատասխան սարքավորումներով կահավորված հատուկ մասնագիտացված մեքենաներով՝ պատանիների կրծքավանդակները նկարահանելու և արյան կարգը որոշելու համար:

բ. Բժշկական քննությունները բարձր մակարդակով անցկացնելու նպատակով զիկոմիսարիատների զորակոչային տեղամասերն ապահովել անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և դեղամիջոցներով:

գ. Տարբեր պատճառներով, սահմանված ժամկետում, կցագրում չանցած պատանիների բժշկական քննության համար, զինկոմիսարիատների լրացուցիչ հայտերի համաձայն, ապահովել հանձնաժողովի անդամ բժիշկների և բուժքույրերի աշխատանքը զինկոմիսարիատներում:

դ. Հսկողություն սահմանել 2000թ. ծնված պատանիների բուժման, հետազոտման և դիսպանսերացման նկատմամբ:

ե. Ապահովել մարզի բուժհիմնարկների կողմից 2000թ. ծնված պատանիներին Ձև N.1 առողջության անձնագրի տրամադրումը:

2) Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

ա. Ապահովել մարզի հանրակրթական դպրոցների, վարժարանների կողմից 2000թ. ծնված պատանիների կցագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և համապատասխան զինվորական կոմիսարիատին ներկայացումը:

բ. Ապահովել հանրակրթական դպրոցների, վարժարանների ղեկավարների կողմից կցագրման ենթակա 2000թ. ծնված պատանիների ցուցակների ներկայացումը համապատասխան զինկոմիսարիատներ՝ ըստ սահմանված ժամանակացույցի և զինկոմիսարիատներ պատանիների ներկայացման կազմակերպումը:

3) Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետին՝

Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

ա. ներկայացնել կցագրման ենթակա 2000թ. ծնված պատանիների ցուցակները համապատասխան զինկոմիսարիատներ՝ ըստ սահմանված ժամանակացույցի,

բ. կազմակերպել պատանիների ներկայացումը զինկոմիսարիատներ։

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 25
ք.Վանաձոր